Շրջակա միջավայրի նախարարության

Գլխավոր քարտուղար պարոն Ս. Աթանեսյանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**1. Քաղաքացիական ծառայողի/ծառայողների անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը**

Նարինե Հակոբյան (հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ, «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի(UNCCD) ազգային համակարգող):

**2. Գործուղման վայրը ժամկետները**

Շվեյցարիայի Համադաշնության Բեռն քաղաք, 2024 թվականի հունվարի 23-25-ը:

**3. Հրավիրող կողմը**

«Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի քարտուղարություն՝ ՄԱԿ-ի Բնապահպանական ծրագրի հետ համատեղ:

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակն էր մասնակցել «Բեռն III» կոնֆերանսին՝ Կենսաբազմազանության հետ կապված կոնվենցիաների միջև համագործակցության՝ Կունմինգ Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակի իրականացման համար:

**5. Քննարկված թեմաները**

Կոնֆերանսի ընթացքում քննարկվեցին կոնվենցիաների համագործակցության ընդլայնման մի շարք թեմաներ.

- բազմաթիվ բնապահպանական բազմակողմ համաձայնագրերի (MEAs) միջոցով կարողությունների զարգացում
- համագործակցություն կենսաբազմազանության ազգային ռազմավարությունների և պլանների (NBSAPs) մշակման և իրականացման գործում.

- ազգային մակարդակում կոնվենցիաների աջակցություն կենսաբազմազանության կոնվենցիայի իրականացմանը և վերանայմանը
- փոխշահավետ գործողություններ կենսաբազմազանության կոնվենցիայի նպատակներին հասնելու համար.
- աջակցություն ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում կոնվենցիաների մեջ սիներգիկ կապերի ամրապնդման համար
- ամրապնդել բոլոր շահառուների՝ հասարակության, կառավարության, գիտական ինստիտուտների ներգրավվածությունը կոնվենցիաների իրականացման հարցերում:

**6. Հանդիպումները, ելույթները.**

Կոնֆերանսին մասնակցում են տարբեր կոնվենցիաներից ռեգիոնալ ներկայացուցիչներ և քարտուղարությունների աշխատակիցներ: Կոնվենցիաների քարտուղարության աշխատակիցները ներկայացրեցին քարտուղարությունների միջև համագործակցային միջավայրի ներկայումս իրականացվող գործողությունները:

Պանելային քննարկմանը ներկայացրեցի ազգային մակարդակում կոնվենցիաների իրականացման շրջանակում սիներգիկ կապերի ամրապնդմանն ուղղված աշխատանքները, առկա բացերը և հանդիպող խոչնդոտները:

**7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Բեռն 3 կոնֆերանսում որոշում կայացնելու մանդատ սահմանված չէր: Տարբեր կոնվենցիաների համակարգողներ և քարտուղարությունների ներկայացուցիչներ վերլուծեցին Բեռնի նախորդ հանդիպումների արդյունքները, համադրեցին Բեռն 3-ի քննարկումների արդյունքում ձևավորված առաջարկների հետ:

**8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Կոնվենցիաների սիներգիզմի ամրապնդմանն ու բարելավմանն ուղղված առաջարկները կամփոփվեն և կներկայացվեն Միացյալ Ազգերի Բնապահպանական Անսամբլեայի 6-րդ հանդիպմանը:

Գործուղվող՝ Նարինե Հակոբյան

01.02.2024թ.